ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.06.2018թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 95 անդամներից 95-ը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ՋՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:

/Զեկ. Գյուղ. և բնապահպանության վ/պ Հ. Տերտերյան/

2. Մարզի համայնքների 2018թ հինգ ամիսների բյուջեների կատարման մասին:

/Զեկ. Ֆին. և սեցիալ-տնտեսական զարգ. վ/պ Գ. Եղիազարյան/

3. 2018թ. 1-ին եռամսյակում մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված հսկողության արդյունքների մասին:

/Զեկ. ՏԻ և ՀԳՄ հարցերով վ/պ Ա. Լալայան/

4. Այլ հարցեր:

1.Լսեցին՝

Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանի զեկուցումը :

/ կցվում է/

Արտահայտվեցին՝ մարզպետ Գ. Սարգսյանը, համայնքների ղեկավարներ, “Արտաշատ” ՋՕԸ-ի տնօրեն Ա. Ղազարյանը, ‘‘Անասնաբուժասանիտարիայի և բուսաբուժասանիտարիայի ծառայությունների կենտրոն’’ ՊՈԱԿ-ի Արարատի մարզային մասնաճյուղի տնօրեն Շ. Բակոյանը:

2.Լսեցին՝

Մարզի համայնքների 2018թ. հինգ ամիսների բյուջեների կատարման մասին աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ մարզպետ Գ. Սարգսյանը,

Արարատի քաղաքապետ Հ. Հայկյանը :

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ըստ հարկատեսակների գումարների հավաքագրման մակարդակը բարցրացնելու ուղղությամբ:

3.Լսեցին՝

2018թ. 1-ին եռամսյակում մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված հսկողության արդյունքների մասին աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ մարզպետ Գ. Սարգսյանը,

Լուսաշող համայնքի ղեկավարի ժ/ պ Ն. Գալստյանը:

Նիստի վերջում ելույթներով հանդես եկան Արարատի մարզային զինկոմ Ա. Մուրադյանը և Արարատի մարզային փրկարարական վարչության պետ Ա. Ամիրջանյանը:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Գ. Սարգսյանը:

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել համայնքներում բնակիչներին ոռգման ջրով ապահովելու հարցը,

- համայնքներում հողերը վարձակալության տրամադրելու , օտարելու վերաբերյալ աճուրդներն անցկացնել օրենքով սահմանված կարգով, դրանց անցկացման մասին տրվող հայտարարությունները փակցնել մարդաշատ , տեսանելի վայրերում,

- համայնքներից մանկապատանեկան ճամբարներ մեկնող երեխաների ցուցակներում ընդգրկել բացառապես սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

/ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ